ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2025 թվականի

Ապրիլի 16-ին կայացած գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ինքնատիպության և ակադեմիական ազնվության ստուգման ու ապահովման մասին։
   /զեկ.՝ Ա.Բաղդասարյան/
2. Ֆակուլտետի ռազմավարությամբ նախատեսված 2025թ. առաջին եռամսյակի համար նախատեսված միջոցառումների կատարողականի մշտադիտարկման արդյունքների մասին։ /զեկ.՝ Ն.Ալավերդյան/
3. Միջմասնագիտական մագիստրոսական թեզերի իրականացման մասին։ /զեկ.Հ.Ավանեսյան/
4. 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի սոցհարցման արդյունքների քննարկում։ /զեկ.՝ ամբիոնի վարիչներ, ուսանողական կառույցներ/
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների համալրման և տվյալ պաշտոնի գիտամանկավարժական գործունեության տեսակները սահմանելու մասին կարգը, պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգի մասին։ /զեկ.՝ Ա.Բաղդասարյան/
6. Ընթացիկ հարցեր։

1. Լսեցին ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ինքնատիպության և ակադեմիական ազնվության ստուգման ու ապահովման հարցը։ Ա.Բաղդասարյանը ներկայացրեց հարցի կարևորությունը։

Ն. Ալավերդյանը մանրամասնեց կայքից և ծրագրից օգտվելու հաջորդական քայլերը e-learning համակարգում։ Նաև նշեց, որ գոյություն ունի գործիքների 2 համակազմ։ Ֆակուլտետը պետք է քննարկի պլագիատի թույլատրելի տոկոսային սահմանը բակալավրիատի և մագիստրատուրայի համար, ինպես նաև գործիքակազմը։

2. Ֆակուլտետի ռազմավարությամբ նախատեսված 2025թ. առաջին եռամսյակի համար նախատեսված միջոցառումների կատարողականի մշտադիտարկման արդյունքների մասին տեղեկությունը ներկայացվեց Ն.Ալավերդյանի կողմից։
Ռազմավարությունը ներկայացված է եղել 20 գործողություններով և ենթագործողություններով։ Մեծ մասը իրականացվել է։ Կան գործողություններ, որոնք շարունակական և ընթացքի մեջ են։
2 գործողություններ չեն իրականացվել, ելնելով հետևյալից՝

- Օտարերկրյա գործընկերների ներգրավվածությունը խնդիրներ է ունեցել ժամանակային առումով,
- Կլինիկական լաբորատորիայի բացումը մերժվել է համապատասխան ներուժ և պայմաններ չունենալու պատճառով։

3. Հ.Ավանեսյանը ներկայացրեց միջմասնագիտական մագիստրոսական թեզերի իրականացման արդյունքները։ 3-րդ տարին է, ինչ իրականանում է համատեղ աշխատանքների ներկայացում սոցիոլոգիայի, ժուռնալիստիկայի, տնտեսագիտության և ԻԿՄ ֆակուլտետների հետ։ ԻԿՄ -ի ֆակուլտետի հետ համատեղ կատարած աշխատանքը ներկայացվել է մրցույթի։ Մագիստրոսները մասնակցել են ներբուհական դրամաշնորհային մրցույթի և շահել ֆիանանսական աջակցություն հետագա աշխատանքների նամար։
4. 2024-2025ուստարվա 1-ին կիսամյակի սոցհարցման արդյունքների քննարկում։ Զեկուցեցին՝Ա.Բաղդասարյանը և Ն.Ալավերդյանը։ Ամբիոնի վարիչները և ուսանողները ներկայացրեցին իրենց նկատառումները։

Որպեսզի ապահովվի համապատասխան ներգրավվածություն հարցումներին և ունենանք ավելի օբյեկտիվ պատկեր, այն անհրաժեշտ է կազմակերպել օֆլայն տարբերակով։

5 Ա.Բաղդասարյանը ներկայացրեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների համալրման և տվյալ պաշտոնի գիտամանկավարժական գործունեության տեսակները սահմանելու մասին կարգը, պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգի մասին փոփոխությունները։

6. Ընթացիկ հարցեր։

Ա.Բաղդասարյանը նշեց լսարանային տեխնիկաների հագեցվածությունը: Նշեց նաև, որ նախատեսված է 2 լսարաններում կատարել նորովի վերանորոգում և կահավորում:

Ն. Ալավերդյանը ևս մեկ անգամ հիշեցրեց ժամանակացույցը կամընտրկան առարկաներ ընտրելու վերաբերյալ: Ամբիոնի վարիչները պարտավորվեցին տեղեկացնել ուսանողներին առ այն, որ ժամանակահատվածը ներկայացված է 14.04.2025-24.04.2025-ը, որից հետո ծրագիրը կփակվի:

Ա.Բաղդասարյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետը դիմել է 2 ասպիրանտական տեղի, սակայն հատկացվել է 1 տեղ հոգեբանության բաժնի համար:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Վ.Պապոան